Գնո՞ւմ ես, էլի, Արուս ջան. բարով գնաս։ Չմոռանաս սկանդալիստ Չարենցին։ Թող ինձ նկարդ. հիշո՞ւմ ես՝ դու ինձ խոսք էիր տվել։

Է, էս էլ էսպես։

Սաղոլ։

Պայծառ մնաս։

Համբուրում եմ ձեռքերդ։

Քո՝ Չարենց

923, 10 ապրիլ, Երևան

ԱՐՈՒՍ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Սիրելի Արուս

Դառնացած սրտով խորին ներողությունս եմ խնդրում ձեզանից այն խայտառակությանց համար, որ հանել եմ ձեր գլխին գինու ընկերակցությամբ։ Կուզեի անձամբ ներողություն խնդրել, բայց... դժվարանում եմ նայել ձեր աչքերին. կարծում եմ կհասկանաք։ Ներողություն, ներող կլինեք-ներեցեք։

Ձեզ հարգող՝ Չարենց

Երևան 1923, 30 ապրիլի